ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Սենդայի գործողությունների ծրագրի կապը
Կայուն զարգացման նպատակների հետ



ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Սենդայի գործողությունների ծրագրի կապը Կայուն զարգացման նպատակների հետ

Մոնցոյի վիճակագրության գրասենյակ ցամաքային ցամաքային ցամաքային

Աղետների ռիսկի նվազեցման Սենդայի գործողությունների շրջանակային ծրագիրն ընդունվել է 2015 թ. մարտի 18-ին Ճապոնիայի Սենդայ քաղաքում՝ Աղետների ռիսկի նվազեցման ՄԱԿ-ի համաշխարհային 3-րդ խորհրդաժողովի ընթացքում:

Սենդայի գործողությունների շրջանակային ծրագիրը գործողության կոչ է՝ առաջիկա 15 տարիների ընթացքում աշխարհը դարձնելու ավելի անվտանգ և նվազեցնելու մարդածին աղետների վտանգը:

Այն հատուկ մշակված է՝ հասնելու աղետների ռիսկի նվազեցման, ինչպես նաև կյանքի, կենսամիջոցների ու առողջության կորուստների զգալի կրճատման: Նոր և ի հայտ եկող ռիսկի կանխարգելումն ու առկա ռիսկի նվազեցումն էական նշանակություն ունեն աղետների պատճառած կորուստների զգալի կրճատման հարցում:

Սենդայի գործողությունների շրջանակային ծրագիրն ունի չորս հիմնական գերակայություն.

Գերակայություն 1. Աղետների ռիսկի գիտակցում

Գիտակցել աղետների ռիսկը՝ նշանակում է ապահովել, որ աղետների ռիսկի կառավարմանն ուղղված քաղաքականությունների ու գործելակարգերի հիմքում լինի խոցելիության և աղետների ազդեցության հստակ ընկալումը:

Գերակայություն 2. Աղետների ռիսկի ղեկավարման համակարգի ամրապնդում՝ բարելավելու աղետների ռիսկի կառավարումը

Աղետների ռիսկի կառավարման համակարգի հզորացում՝ նշանակում է ունենալ հստակ ռազմավարություն, ուժեղ հաստատություններ, օրենսդրական դաշտ և բյուջե՝ ապահովելու աղետների ռիսկի արդյունավետ կառավարումը:

Գերակայություն 3. Ներդրումներ աղետների ռիսկի նվազեցման ոլորտում՝ դիմակայունության ամրապնդման նպատակով

Դիմակայունության ամրապնդման նպատակով աղետների ռիսկի նվազեցման ոլորտում ներդրումները ներառում են պետական և մասնավոր ներդրումներ կորուստների կանխարգելմանն ու նվազեցմանն ուղղված միջոցառումներում:

Գերակայություն 4. Հետաղետային ավելի բարձրակարգ վերականգնում

Աղետների ռիսկի կայուն աճը, մարդկանց եւ ակտիվների նկատմամբ սպառնալիքի մեծացումը ցույց են տալիս, որ անհրաժեշտ է էլ ավելի ամրապնդել աղետների պատրաստվածության արդյունավետ արձագանքը և «Անել ավելի լավ, քան արվում է» սկզբունքի ներդրում վերականգնման և վերակառուցման բնագավառներում:

Սենդայի գործողությունների ծրագիրը սահմանում է 7 թիրախ՝ չափելու առաջընթացը աղետների ռիսկի զգալի նվազեցման հարցում: Թիրախներից չորսն ուղղված են աղետների պատճառած կորուստների կրճատմանը:

Թիրախ 1. Մինչև 2030 թ. զգալիորեն կրճատել աղետներից մահացության համաշխարհային ցուցանիշը: 2005-2015 թթ. աշխարհով մեկ աղետների զոհ է դարձել ավելի քան 700 հազար մարդ:

Թիրախ 2. Մինչև 2030 թ. համաշխարհային մակարդակով զգալիորեն կրճատել աղետներից տուժած մարդկանց թիվը: Վերջին 10 տարվա ընթացքում ավելի քան 1,4 միլիոն մարդ վնասվածք է ստացել, 24 միլիոնը՝ դարձել անօթևան:

Թիրախ 3. Մինչև 2030 թ. կրճատել աղետների պատճառած տնտեսական ուղղակի կորուստները՝ համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) նկատմամբ:

Այս թիրախն ուղղված է աղքատության վերացմանը և կայուն տնտեսական աճի խթանմանն ու բոլորի համար արժանապատիվ աշխատանքի հնարավորությանը: Դիմակայուն ենթակառուցվածքների ստեղծման գործում ներդրված յուրաքանչյուր 1 դոլարը կարող է խնայել արձագանքման և վերականգնման վրա ծախսվող 7 դոլար:

Թիրախ 4. Մինչև 2030 թ. էականորեն նվազեցնել աղետների հետևանքով ենթակառուցվածքներին պատճառվող վնասներն ու կանխարգելել հիմնական ծառայությունների, այդ թվում առողջապահական և կրթական հաստատությունների աշխատանքի խափանումը, որն, այլ միջոցառումների հետ մեկտեղ, կիրականացվի դիմակայունության բարձրացման միջոցով:

Այս թիրախն ուղղված է յուրաքանչյուրի առողջության և բարեկեցության բարելավմանը, ինչպես նաև կրթական դիմակայուն ենթակառուցվածքների հասանելիության մեծացմանն ու մարդկային բնակավայրերի կայունության և անվտանգության ապահովմանը:

Թիրախ 5. Մինչև 2020 թ. էականորեն ավելացնել ազգային եւ տեղական աղետների ռիսկի նվազեցման ռազմավարություններ ունեցող երկրների թիվը:

Թիրախ 6. Մինչև 2030 թ. զարգացող երկրներում էականորեն ընդլայնել միջազգային համագործակցությունը՝ պատշաճ և կայուն աջակցության միջոցով համալրելու սույն ծրագրի իրագործման ազգային ջանքերը:

Թիրախ 7. Մինչև 2030 թ. զգալիորեն մեծացնել տարատեսակ վտանգների համար նախատեսված վաղ ազդարարման համակարգերի թիվը և հասանելիությունը, ինչպես նաև աղետների ռիսկի մասին տեղեկատվության և գնահատումների հասանելիությունը բնակչությանը:

Սենդայի գործողությունների շրջանակային ծրագրին հաջորդեց «Կայուն զարգացման 2030» օրակարգը, որում սահմանված են կայուն զարգացման 17 նպատակներն, ուղղված հաջորդ 15 տարվա ընթացքում աղքատության վերացմանն ու կայուն զարգացման հաստատմանը: Կայուն զարգացման նպատակները հիմնվում են հազարամյակի զարգացման նպատակների (ՀԶՆ) արձանագրած հաջողությունների վրա և նպատակաուղղված են վերացնելու աղքատությունն իր բոլոր ձևերով ու դրսևորումներով: Նոր նպատակները բացառիկ են այնքանով, որ բոլոր երկրներին, այդ թվում հարուստ, աղքատ և միջին եկամուտ ունեցող երկրներ, կոչ են անում անցնել գործողությունների՝ խթանելու բարգավաճումը և միաժամանակ պաշտպանելու մոլորակը: ՄԱԿ-ի անդամ 193 երկրները պարտավոր են համախմբելու իրենց ջանքերը՝ վերացնելու աղքատությունն իր բոլոր ձևերով, պայքարելու անհավասարությունների դեմ և լուծելու այն բոլոր խնդիրները, որ ձևակերպված են նպատակներում:

Սենդայի գործողությունների ծրագիրը օժանդակում է կայուն զարգացման 17 նպատակների ու կլիմայի փոփոխության վերաբերյալ համաձայնագրի իրականացմանը: Այն իր թիրախներով կնպաստի, որ Կայուն զարգացման նպատակներն իրականություն դառնան:

Աղետների ռիսկի կառավարման կարողությունների զարգացումը Հայաստանում

Հայաստանն առաջին երկրներից էր, որ աղետների ռիսկի նվազեցման ոլորտում նախաձեռնեց երկրում առկա կարողությունների ռազմավարական վերանայում հիմք ընդունելով Աղետների ռիսկի նվազեցման Սենդայի գործողությունների 2015-2030 թթ. ծրագիրը և Կայուն զարգացման նպատակները:

ԱՌՆ կարողությունների գնահատման և ԱՌՆ ազգային ռազմավարության մշակման ոլորտում նախկինում ունեցած հաջող փորձի հիման վրա որոշվեց իրականացնել աղետների ռիսկի կառավարման (ԱՌԿ) կարողությունների գնահատում, որը կնպաստի երկրում ընդհանուր ԱՌԿ ռազմավարական զարգացման գործընթացի իրականացմանը: ԱՌԿ կարողությունների գնահատման գործընթացը նախաձեռնեց ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը և իր աջակցությունը ստացավ Համաշխարհային բանկի և ՄԱԶԾ կողմից: Գործընթացի իրականացման համար մշակվեց գնահատման հատուկ մեթոդաբանություն, որն ապահովեց բոլոր հիմնական շահագրգիռ կողմերի ամբողջական մասնակցությունը գործընթացին և հնարավորություն ստեղծեց իրականացնել գոյություն ունեցող կարողությունների և Կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ) համապատասխան թիրախների հետ կապերի բազմաշերտ վերլուծություն: ԱՌԿ կարողությունների գնահատման արդյունքում

UN AN-1000-October 2016 UNO/DPI Yerevan/162

ձևավորվեց ԱՌԿ համակարգի 2016-2020 թթ. զարգացման միջոցառումների ցանկ, որը կօգնի ՀՀ կառավարությանը՝ մշակել համապարփակ պլաններ և ծրագրեր աղետների ռիսկի կառավարման կարողությունների հետագա զարգացման և երկրի ընդհանուր դիմակայունության բարձրացման ուղղությամբ՝ ներառելով Սենդայի գերակայությունները երկրի զարգացման ծրագրերում, որոնք անմիջականորեն փոխկապակցված են նաև ԿԶՆ թիրախների հետ:

Առաջարկվող միջոցառումներն են.

1. Բարելավել ՀՀ-ում գործող ԱՌՆ իրավական դաշտը, կոնկրետ կերպով սահմանել յուրաքանչյուր գերատեսչության պատասխանատվությունն ու պարտականությունները տարբեր աղետների կանխարգելման և հաղթահարման ուղղությամբ:

2. Ներառել և հաստատագրել ԱՌԿ միջոցառումները ՀՀ տնտեսության և պետական կառավարման ոլորտների զարգացման ծրագրերում:

3. Ձևավորել և մշտապես կատարելագործել տարբեր աղետներին արձագանքելու մանրամասն մշակված ազգային, մարզային ու համայնքային մակարդակների իրատեսական պլաններ:

4. Ապահովել որ բոլոր նոր կառուցվող ու վերակառուցվող առողջապահական, կրթական, սոցիալական և այլ հասարակական նշանակության հիմնարկների շինարարական աշխատանքներն իրականացնելիս՝ սկսած պլանավորումից մինչև շինարարության ավարտը, խստորեն պահպանվեն աղետակայուն ժամանակակից քաղաքաշինական նորմերը և իրականացվի պատշաճ մոնիտորինգ:

5. Բոլոր մակարդակներում պարբերաբար իրականացնել կանոնավոր վարժանքներ՝ միտված ԱՌԿ կարողությունների զարգացմանը:

6. ՀՀ տարածքում ձևավորել դիմակայուն առողջապահական համակարգ և այդ ուղղությամբ ժամանակակից, համապատասխան գիտելիքներով զինված ու պատրաստված բժշկական անձնակազմ:

7. Զարգացնել ՀՀ տարբեր մարզերում, համայնքներում փրկարար աշխատանքների համար անհրաժեշտ նյութական բազան, դրանք մշտապես համալրել ժամանակակից բժշկական, բժշկասանիտարական գույքով և տարբեր ուսումնական սարքավորումներով:

8. Իրականացնել աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումներ հատուկ պահպանվող տարածքներում:

9. Ավելացնել պետական և մասնավոր ներդրումները աղետների ռիսկի կանխարգելման և նվազեցման ոլորտում, ինչպես նաև երկարաժամկետ ներդրումները նորարարության ու տեխնոլոգիաների զարգացման և աղետների ռիսկի կառավարման ոլորտում:

10. Բարելավել ԱՌՆ կրթության հետագա զարգացումը ընդհանուր, մասնագիտական, բարձրագույն, ինչպես նաև շարունակական կրթական համակարգերում:

11. Ձևավորել ՀՀ-ում աղետներին առնչվող վիճակագրական միասնական տեղեկատվական համակարգ՝ համաձայն միջազգային նորմերի:

12. Կատարելագործել համապատասխան կառավարման մարմիններում վարչական ռեգիստրների վարման գործընթացը՝ ներառելով ԱՌԿ դրույթները:

13. Ընդգրկել ԱՌԿ միջոցառումները համայնքային զարգացման պլաններում և բյուջեներում:

14. ՀՀ բոլոր համայնքներում իրականացնել աղետների ռիսկերի գնահատում (արաջին հերթին Երևանի):

15. Բոլոր մարզերի համար ստեղծել երկրատեղեկատվական միասնական համակարգեր:

16. Բոլոր մարզերի համար ձևավորել աղետների ռիսկերի կառավարման տեղեկատվական թափանցիկ համակարգեր (արաջին հերթին Երևանի):

17. Ձևավորել հանրային իրազեկման և ճգնաժամային հաղորդակցության գործուն համակարգ՝ Արտակարգ ցանց, ԱՌԿ հանրամատչելի շտեմարանով, բոլոր պատասխանատուների,լրատվամիջոցների, տեղեկատվական նորագույն տեխնալոգիաների ներգրավմամբ:

18. Ներառել ԱՌԿ չափորոշիչները բոլոր բնակավայրերի, առաջին հերթին Երևան քաղաքի գլխավոր հատակագծի ճշգրտման գործընթացի մեջ:

19. Ստեղծել նոր չափանիշներով վաղ ազդարարման համակարգեր՝ ազգային, մարզային և համայնքային մակարդակներում:

20. Պարբերաբար իրականացնել ԱՌԿ տեղեկատվական արշավներ ազգային, մարզային և համայնքային մակարդակներում:

ԱՌԿ կարողությունների գնահատման հիման վրա արդեն իսկ մշակվում է ԱՌԿ նոր ազգային ռազմավարական փաստաթուղթ, որով երկրում իրականացվող զարգացման գործընթացները կհամապատասխանեցվեն Աղետների ռիսկի նվազեցման Սենդայի գործողությունների ծրագրի և ԿՁՆ թիրախների պահանջներին՝ հիմք հանդիսանալով «Ռիսկի գիտակցումով պայմանավորված» երկրի դիմակայուն զարգացման համար:

ՄԱԿ-ի 2030թ. զարգացման օրակարգը

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ

17 ՆՊԱՏԱԿ ՎԵՐԱՓՈԽԵԼՈՒ ԱՇԽԱՐՀԸ